ԵԴ/0307/01/18
(ՀԿԴ/0017/01/22)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

21 մարտի 2023 թվական ք.Երևան

Ուսումնասիրելով ընդդատության վերաբերյալ վեճը լուծելու համար թիվ ԵԴ/0307/01/18 (ՀԿԴ/0017/01/22) քրեական գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2023 թվականի մարտի 15-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2018 թվականի մայիսի 8-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ստացվել թիվ ԵԴ/0307/01/18 քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Մկրտիչ Ստեփանի Դերիկյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 308-րդ հոդվածի 1-ին մասով, և մյուսների:

2018 թվականի մայիսի 14-ին քրեական գործն ընդունվել է նույն դատարանի դատավոր Ա.Վարդապետյանի վարույթ:

1.1. 2020 թվականի հունվարի 18-ին թիվ ԵԴ/0307/01/18 քրեական գործը վերամակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հ.Մանուկյանին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2022 թվականի օգոստոսի 29-ին որոշում է կայացրել վերոնշյալ քրեական գործն ըստ ընդդատության Հակակոռուպցիոն դատարան ուղարկելու մասին:

2. Հակակոռուպցիոն դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 2-ի որոշմամբ թիվ ՀԿԴ/0017/01/22 քրեական գործի վարույթը վերսկսվել է:

Հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի փետրվարի 27-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0017/01/22 (ԵԴ/0307/01/18) քրեական գործն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2022 թվականի մարտի 15-ին որոշում է կայացրել ընդդատության մասին վեճը լուծելու համար քրեական գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին:

4. Քրեական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի մարտի 16-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Մկրտիչ Ստեփանի Դերիկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 308-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ *«(…) նա հանդիսանալով ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» Ճանապարհապարեկային գումարտակի 7-րդ սպայական դասակի տեսուչ՝ պաշտոնատար անձ և «Ոստիկանության մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև դրանցից բխող այլ նորմատիվ իրավական ակտերով լիազորված լինելով իրականացնելու նյութական վնասով ճանապարհատրանսպորտային պատահարների գործերով անվարույթ ձևակերպում, չարաշահելով իր պաշտոնեական լիազորությունները,*

մտերիմ Արամ Գալստյանին իր ծառայողական գործառույթներից բխող օժանդակություն ցույց տալու անձնական դրդումներից ելնելով, պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ, որի հետևանքով, ուսիկանության հեղինակազրկման արդյունքում, պետության օրինական շահերին պատճառվել է էական վնաս:

Մկրտիչ Դերիկյանը, չարաշահելով իր պաշտոնեական դիրքը, հանցակցել է նյութական վնասով ճանապարհատրանսպորտային շինծու պատահարների կազմակերպման միջոցով «Ռոսգոսստրախ-Արմենիա», «Ինգո Արմենիա» ապահովագրական փակ բաժնետիրական և «Նաիրի Ինշուրանս» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններից իրականացված հափշտակությանը, որի արդյունքում կատարվել է խարդախության եղանակով ուրիշի գույքի առանձնապես խոշոր չափերով՝ 17.864.370 ՀՀ դրամի հափշտակություն, իսկ առանձնապես խոշոր չափ կազմող՝ 6.110.000 ՀՀ դրամի հափշտակությունը ավարտին չի հասցվել հանցավորների կամքից անկախ հանգամանքներով, նկատի ունենալով, որ ապահովագրական ընկերությունը մերժել է ապահովագրական գումար ստանալու պահանջը:

(...) Բացի այդ, 2017 թվականի մարտի 14-ին, Արամ Գալստյանը Մկրտիչ Դերիկյանի, Միշա Մկրտչյանի և Անդրանիկ Բայանդուրյանի հանցակցությամբ կազմակերպել է «ՎԱԶ-2106» մակնիշի 64 SU 070 հաշվառման համարանիշի և «BMW 530» մակնիշի 35 FR 783 հաշվառման համարանիշի ավտոմեքենաների մասնակցությամբ նյութական վնասով ճանապարհատրանսպորտային շինծու պատահարը, որի ընթացքում, հափշտակության կատարման համար առկա խոչընդոտները վերացնելու նպատակով Միշա Մկրտչյանը, տրամադրելով «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենան, դեպքի ձևակերպման ընթացքում հանդես է եկել որպես տվյալ մեքենայի վարորդ, իսկ Անդրանիկ Բայանդուրյանը, հանցագործությանը օժանդակելու դիտավորությամբ, դեպքի ձևակերպման ընթացքում հանդես է եկել որպես իր իսկ կողմից շահագործվող «BMW 530» ավտոմեքենայի վարորդ: Մյուս հանցակից՝ պաշտոնատար անձ հանդիսացող Մկրտիչ Դերիկյանը Արամ Գալստյանից տեղեկանալով նախանշված հանցավոր դեպքի վերաբերյալ, հափշտակությանը օժանդակելու դիտավորությամբ,

անձնական շահագրգռվածությունից ելնելով պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, անձամբ մասնակցելով նշված շինծու պատահարի արձանագրման գործընթացին, նախապես ձեռք բերված հանցավոր համաձայնության շրջանակներում, ապահովել է դրա ձևակերպումը: Արամ Գալստյանի կողմից կազմակերպված նշված խարդախության արդյունքում՝ Անդրանիկ Բայանդուրյանը «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունից ստացել է 630.000 ՀՀ դրամ՝ հափշտակելով նշված խոշոր չափերով գումարը, որից 200.000 ՀՀ դրամը կազմել է իր մասնաբաժինը, իսկ մնացած գումարը՝ փոխանցել է Արամ Գալստյանին: (...)»[1]:

6. Հակակոռուպցիոն դատարանի՝ 2022 թվականի սեպտեմբերի 2-ի որոշմամբ Մ.Դերիկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով[2]:

7. Հակակոռուպցիոն դատարանը, 2023 թվականի փետրվարի 17-ի որոշմամբ քննության առնելով թիվ ՀԿԴ/0017/01/22 քրեական գործն ըստ ընդդատության ուղարկելու վերաբերյալ ամբաստանյալներ Ա.Գալստյանի և Վ.Բարեղամյանի պաշտպան Ա.Թևանյանի, ամբաստանյալ Մ.Դերիկյանի պաշտպան Թ.Բաղդասարյանի ներկայացրած միջնորդությունը, արձանագրել է. *«(...) Հաշվի առնելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ թիվ ՀԿԴ/0017/01/22 քրեական գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանից առարկայական ընդդատության կարգով ՀՀ հակակոռուպցիոն դատարան է ուղարկվել Մկրտիչ Դերիկյանին ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 308–րդ հոդվածի 1–ին մասով առաջադրված մեղադրանքի պատճառով, հետևաբար քրեական գործի դատական քննության նախապատրաստական փուլում վերը նշված հոդվածով քրեական հետապնդումը դադարեցնելը պայմանավորում է քրեական գործի ընդդատության փոփոխության անհրաժեշտությունը:*

Հետևաբար, նկատի ունենալով, որ թիվ ՀԿԴ/0017/01/22 քրեական գործով Արամ Ռուբիկի Գալստյանին մեղսագրվում է ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 38-

---

[1] Տե՛ս քրեական գործ, հատոր 9, թերթեր 65-71:
[2] Տե՛ս թիվ ՀԿԴ/0017/01/22 քրեական գործը, հատոր 4, թերթեր 63-81:

178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Մկրտիչ Ստեփանի Դերիկյանին՝ ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Գագիկ Գևորգի Միքայելյանին՝ ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Հայկ Հենրիկի Իշխանյանին՝ ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Նիկոլայ Մովսեսի Ավալյանին՝ ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Վարդան Սամվելի Ենոքյանին՝ ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, Վահե Գրիգորի Բարեղամյանին՝ ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքների կատարում, նրանց մեղսագրված արարքներից որևէ մեկը ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 6-րդ հավելվածում ներառված չէ, չի հանդիսանում կոռուպցիոն բնույթի հանցագործություն, ուստի Դատարանը գտնում է, որ թիվ ՀԿԴ/0017/01/22 քրեական գործն (…) ըստ ընդդատության պետք է ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան (…)»[3]:

8. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2022 թվականի մարտի 15-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) [Ն]ախ հարկ է նկատել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածով սահմանված է, որ երկու կամ ավելի հանցագործությունների վերաբերյալ գործերով, թեկուզև դրանցից մեկը համարվում է կոռուպցիոն հանցագործություն, ապա գործը քննում է ՀՀ հակակոռուպցիոն դատարանը: Սույն դեպքում ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ օրենսդիրը գործի քննությունը պայմանավորում է ոչ թե հոդվածների քանակով, այլ ինքնին ամբողջական գործով: Այլ խոսքով, վկայակոչած իրավանորմից ակնհայտ է, որ սույն գործն ինքնին համարվում է կոռուպցիոն բնույթի և որևէ նշանակություն չի կարող ունենալ, թե կոռուպցիոն բնույթի հանցագործության ենթադրյալ արարքի մասով քրեական հետապնդումը դադարեցվել է՝ թե ոչ, քանի որ տվյալ գործը, շարունակում է հանդիսանալ կոռուպցիոն բնույթի գործ: Հակառակ մոտեցումը, Դատարանի գնահատմամբ չի բխում վերը նշված իրավանորմերի պահանջներից: Ավելին՝ խմբագրվում է օրենսդրական նշված կանոնը: (…)*

[3] Տե՛ս թիվ ՀԿԴ/0017/01/22 քրեական գործը, հատոր 4-րդ, թերթեր 141-142:

[Հ]արկ է նկատել, որ Մկրտիչ Դերիկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքի նկարագրությունից և ձևակերպումներից ակնհայտ է, որ Մկրտիչ Դերիկյանի կողմից ենթադրաբար կատարված գործողությունները դրսևորվել են պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով: Այսինքն՝ թեկուզև ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնելով՝ տվյալ գործը այնուամենայնիվ շարունակվում է հանդիսանալ որպես կոռուպցիոն բնույթի գործ (…)»[4]*:*

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

9. *Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ/0307/01/18 (ՀԿԴ/0017/01/22) քրեական գործն ընդդատյա է հակակոռուպցիոն դատարանին:*

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի*

---

[4] Տե՛ս քրեական գործ, հատոր 19, թերթեր 45-54:

նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»[5]:

12. Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[6]:

13. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (19-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

---

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[7]:

14. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները քննում են բոլոր քրեական գործերը, բացառությամբ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա գործերի, քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ գործեր (նյութեր), ինչպես նաև վերահսկողություն են իրականացնում քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ»*:

2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»*:

15. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ՝

- Հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի փետրվարի 17-ին որոշում է կայացրել քրեական գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին՝ հիմքում դնելով այն, որ Մ.Դերիկյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 308–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված արարքի համար քրեական հետապնդումը դադարեցվելու պայմաններում ամբաստանյալներին մեղսագրված ենթադրյալ հանցագործություններից որևէ մեկը չի հանդիսանում կոռուպցիոն բնույթի, հետևաբար քրեական գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին[8],

---

[7] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը գտել է, որ թիվ ԵԴ/0307/01/18 քրեական գործն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին, պատճառաբանելով, որ կոռուպցիոն բնույթի հանցագործության ենթադրյալ արարքի մասով քրեական հետապնդումը դադարեցվելու պայմաններում գործը շարունակում է հանդիսանալ կոռուպցիոն բնույթի: Բացի այդ, Մ.Դերիկյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով առաջադրված մեղադրանքի նկարագրությունից պարզ է դառնում, որ վերջինիս կողմից ենթադրաբար կատարված գործողությունները դրսևորվել են պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, որպիսի պայմաններում քրեական գործը հանդիսանում է կոռուպցիոն բնույթի[9]:

16. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-14-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ Մ.Դերիկյանին առաջադրված մեղադրանքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վերջինիս մեղսագրվել է ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված և «Կոռուպցիոն հանցագործությունների ցանկ» N 6 հավելվածով նշված հափշտակության՝ «պաշտոնեական դիրքն օգտագործելու», այնպես էլ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Կոռուպցիոն հանցանքների ցանկ» N 1 հավելվածով սահմանված հափշտակության՝ «իշխանական կամ ծառայողական լիազորություններն օգտագործելու» հատկանիշը, որպիսի պայմաններում նշված արարքը դասվում է կոռուպցիոն հանցագործությունների շարքին, ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով ենթակա է քննության Հակակոռուպցիոն դատարանի կողմից:

17. Ինչ վերաբերում է Հակակոռուպցիոն դատարանի այն դատողությանը, որ Մ.Դերիկյանի նկատմամբ կոռուպցիոն բնույթի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված արարքի համար քրեական հետապնդումը դադարեցնելուց հետո մնացած մասով քրեական գործի քննությունն ընդդատյա է

[9] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

դառնում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, ապա նշվածն ընդունելի լինել չի կարող՝ այն պատճառաբանությամբ, որ ընդդատության կանոնների պահպանմամբ վարույթ ընդունված քրեական գործի ընդդատությունը չի կարող փոխվել՝ ելնելով քրեական վարույթի հետագա ընթացքում մեղադրյալին մեղսագրված արարքների քանակի կամ բնույթի փոփոխությունից: Ուստի, տվյալ պարագայում Մ.Դերիկյանի նկատմամբ կոռուպցիոն բնույթի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308–րդ հոդվածի 1–ին մասով նախատեսված արարքի համար Հակակոռուպցիոն դատարանի կողմից քրեական հետապնդման դադարեցումը չէր կարող հիմք հանդիսանալ քրեական գործի ընդդատությունը փոխելու համար:

18. Այսպիսով, հիմք ընդունելով վերոշարադրյալը, գտնում եմ, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ/0307/01/18 (ՀԿԴ/0017/01/22) քրեական գործն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին, հիմնավոր է:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 6-րդ մասով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ ԵԴ/0307/01/18 (ՀԿԴ/0017/01/22) քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Մկրտիչ Ստեփանի Դերիկյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, և մյուսների, ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ